



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 96-Ն
ք. Երևան

ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի, 7-րդ մասի, 47-րդ հոդվածի 4-րդ մասի և «Լիցենզավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ցանցային օպերատորի գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 8
ք. Երևան

ԿԱՐԳ

ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման ընթացակարգը:

2. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորումն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի համաձայն:

3. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) ստանալու համար կարող են դիմել իրավաբանական և ֆիզիկական անձինք:

4. Լիցենզիան տրվում է տասը տարի գործողության ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

5. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության ժամկետի երկարաձգումը և կրկնօրինակի տրամադրումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

2. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

6. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման համար ներկայացվում է ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու դիմում (այսուհետ՝ Դիմում)՝ համաձայն Ձև N 1-ի և անհրաժեշտ փաստաթղթեր:

7. Դիմումին կցվում են՝

- 1) դիմումատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները,
- 2) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
- 3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր:

8. Դիմումին կից փաստաթղթերը ներկայացվում են թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ...

թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):

9. Փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կարգով սահմանված պահանջներին:

10. Դիմումատուն, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

11. Փաստաթղթերը Հանձնաժողով կարող են ներկայացվել պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ առձեռն՝ ստացականով:

12. Դիմումին կից ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը դրանք ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դիմումատուին պատշաճ կերպով տեղեկացնում է այդ մասին՝ դրանց շտկման նպատակով: Դիմումատուն իրավունք ունի սույն մասում նշված ծանուցումը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Հանձնաժողով ներկայացնել փաստաթղթերը՝ առանց նշված թերությունների:

3. ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱԲԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

13. Հանձնաժողովն իր նիստում քննարկում է Դիմումը և որոշում է ընդունում այն մուտքագրելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

14. Դիմումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումը դիմումատուին ուղարկվում է որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

15. Որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

16. Դիմումատուն լիցենզիա տրամադրելու մասին Հանձնաժողովի որոշումը ստանալուց հետո՝ 20-օրյա ժամկետում վճարում է «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրք:

17. Սույն կարգի 16-րդ կետում նշված պետական տուրքի վճարումից հետո՝ տասնօրյա ժամկետում Հանձնաժողովը դիմումատուին տալիս է լիցենզիա:

18. Պետական տուրքը չվճարելը հիմք է լիցենզիա տրամադրելու մասին որոշումը Հանձնաժողովի կողմից ուժը կորցրած ճանաչելու համար:

4. ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՈՒՄԸ

19. Դիմումը մերժվում է, եթե՝

- 1) ներկայացված փաստաթղթերը թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են.
- 2) փաստաթղթերը չեն համապատասխանում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին.
- 3) դիմումատուն չի վերացրել Հանձնաժողովի կողմից նշված թերությունները.
- 4) բացակայում են տեսալսողական տեղեկատվության հեռարձակման տեխնիկական հնարավորությունները:

Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգի

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՍ

Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու

Դիմումատուի անվանումը _____

Գտնվելու/հաշվառման վայրը _____

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն _____

Միման տարածքը _____

Վերահաղորդման եղանակը Մալուխային IPTV Բջջային OTT

Այլ _____

Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի թիվը _____

Կից փաստաթղթեր՝ _____ թերթ:

Դիմումատու _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

_____ (օրը, ամիսը, տարեթիվը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԼԻՑԵՆԶԻԱ _____

(լիցենզիայի սերիան և համարը)

ք. _____

_____ *(լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

տրվում է

_____ *(իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)*

_____ *(իրավաբանական անձի գտնվելու կամ ֆիզիկական անձի հաշվառման վայրը)*

գործունեության
տեսակը

սփռման տարածքը

լիցենզիայի գործողության
ժամկետը

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

_____ *(ստորագրություն)*

Կ.Տ.

_____ *(անուն, ազգանուն)*